ՆԱԶԵԼԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՆՁԻ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՃԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում քննարկվում են անձի գործոնները մտածողության ոճերի համատեքստում, որի ուսումնասիրության համար կիրառվել է Քեթթելի բազմագործոն անձնային թեստը: Ավելի ստույգ, փորձ է արվում պարզելու, թե ինչպես է արդեն անձի ամբողջականության ռեալությունը ներգործում մտածողության ոճաբանության վրա՝ մասնավորաբար մասնագիտական կրթության համակարգում: Դիտարկվում է այն հարցը, թե բազմաթիվ անձնային գործոններից որն է գերակայում մտածողության ոճն ավելի տեսանելի դարձնելու համար: Կարևորվում և ուսումնասիրվում են նաև ինտելեկտի գործոնի և մտածողության ոճերի միջև եղած հնարավոր կապերը:

Բանալի բառեր՝ *մտածողության ոճ, անձնային գիծ, ինտելեկտուալ առանձնահատկություններ, հուզակամային առանձնահատկություններ, հաղորդակցական հատկություններ, իմացական գործընթաց, մտավոր կարողություններ:*

Հոգեկան կերտվածքի ձևավորման խաչմերուկներում մտավոր-իմացական զարգացման միտումները, ինքնուրույն մտածելու կարողությունը մղվում են առաջին պլան, քանզի գիտելիքների արագընթաց նորացումը, կրթության համակարգի տեխնոլոգիայի նորարարական զարգացումներն ուսումնառողից պահանջում են մտքի ճկունություն, գիտելիքների որակական մշակում, իմացության ընդլայնում և այլն: Ի վերջո ողջ կրթական համակարգի բարեփոխումներն այսօր անխուսափելիորեն հաշվի են նստում ուսումնառողի՝ որպես կայացող քաղաքացու, սուբյեկտի հոգեկանի փոփոխությունների հետ: Անտարակույս, այստեղ է, որ կրթության ձեռքբերման քառուղիներում յուրաքանչյուրը կյանքի է կոչում ոչ միայն իր իսկ ցանկությունները, այլև մտքի անհատական առանձնահատկությունները (ոճերը), ստեղծագործական ընդունակությունները, որպեսզի հետ չմնա, ավելի ստույգ ասած, հնարավորինս համահունչ կերպով դիրքավորվի կրթական համակարգում բազմաբնույթ գիտելիքների (ինֆորմացիա, տեղեկույթ և այլն) հորձանուտում, յուրացնի և օգտագործի դրանք՝ ժամանակի մարտահրավերներին համապատասխան[1]:

Կրթության ոլորտում տարաբնույթ ուսումնաիմացական խնդիրների արդյունավետ լուծման հաջողությունը մեծապես կախված է ապագա մանկավարժի ստեղծագործական ունակություններից, որոնք, բնականաբար, պայմանավորված են նաև ուսանողի կողմից ընտրված մտածողության ոճերի դինամիկ համակարգի նպատակահարմարությամբ, մտածողության համապատասխան ոճի կիրառմանը միտված նպատակային կողմնորոշումներով, ձևավոր-

1 Տե՛ս, **Даниленкова Г.Г.**, Развитие у студентов педагогического мышления, Научная школа профессора О.С. Гребенюка, Сборник научных статей, Изд-во Кал. ГУ, 2002, с. 42-47.

ման հնարավոր ուղիներով և այլն[1]: Մարդու ստեղծագործ միտքը, անկախ գործունեության կոնկրետ ոլորտից, նախատրադրամադրվածությունից և հենքային իմացական կողմնորոշումներից (գիտական, տեխնիկական, գեղարվեստական, հոգեբանամանկավարժական և այլն), անբաժանելի է նրա մտավոր կարողություններով պայմանավորված իմացական գործընթացներից, ակտիվ երևակայությունից, կանխատեսումից, ինտուիցիայից և այլն, որոնք մինչմասնագիտական գործունեության մեջ կարող են նաև ինքնաբուխ կերպով ձևավորվել ու արտահայտվել: Մինչդեռ դրանց տարերային դրսևորումները ոչ միայն նպատակահարմար չեն կրթական խնդիրներից և արժեքներից ելնելով, այլև հետագայում մասնագիտական գործունեության մեջ կարող են զգալիորեն խոչընդոտել բավականին անհրաժեշտ փորձառություն ձեռք բերելուն: Հիմք ընդունելով դրանք՝ սույն փորձարարական ուսումնասիրության հիմնական նպատակը հանգում է մտածողության որոշակի ոճերի ձևավորմանը, որը, այլ հեղինակների կողմից կատարած բազմաթիվ հետազոտությունների տեսանկյունով, դիտվում է որպես առաջնային հիմք և էական պայման՝ ինտեգրալային և ստեղծարար մտածողության ձևավորման համար[2]:

Մտածողության ոճերի բացահայտման համատեքստում օգտագործել ենք 16 PF հարցարանը, որը կիրառվում է բոլոր այն իրավիճակներում, երբ անհրաժեշտ է ուսումնասիրել մարդու անհատական հոգեբանական առանձնահատկությունները: Հարցարանով ախտորոշում են անձի կառուցվածքային գործոնները: Դինամիկ գործոնների ուսումնասիրումը (մոտիվներ, պահանջմունքներ, հետաքրքրություններ, արժեքներ) պահանջում է այլ մեթոդների կիրառում: Ինչպես նշված է հարցարանի հրահանգում, փորձարկվողներին առաջարկվել է Ռ. Քեթթելի 105 հարցից բաղկացած հարցարանը[3], որին, ըստ հրահանգի, փորձարկվողները պետք է պատասխանեն 20-50 րոպեի սահմաններում: Մտածողության ոճերի ուսումնասիրումն առնչվում է անձի բազմագործոն ուսումնասիրման խնդրի հետ ոչ միայն այն պատճառով, որ հարցարանում կան հարցեր մարդու ինտելեկտուալ առանձնահատկությունների հետ կապված (B գործոն): Մտածողության ոճը բացահայտելիս չենք սահմանափակվել միայն մտավոր կարողությունների, տեղեկատվական հենքի, իմացական կողմնորոշումների, իմացական ներուժի ռացիոնալ օգտագործման հարցերի ուսումնա-

---

1 Տե՛ս, **Богоявленская Д.Б.**, Психология творческих способностей, Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М., Академия, 2002, с. 23-26, 38-43, 68-92, 140-145, 180-184, 200-201, նաև՝ **Кузьмина Н.В.**, **Куприна Е.В.** Формирование научного стиля мышления студентов, Информационные технологии в образовании, Тез. докл. VIII Международной конференции-выставки, М., 1998, с. 35-36.

2 Տե՛ս, **Дронова Т.А.**, Формирование интегрально-креативного стиля мышления у будущих педагогов, Т.А. Дронова, В.Г. Михайловский, Инновационные подходы к моделированию социальных систем и управлению ими, Научно-методический сборник, Под общей редакцией О.Г. Федорова, М., ООО «ЛАРК ЛТД», 2008, с. 125-132, նաև՝ Дронова Т.А., Концепция формирования интегрально-креативного стиля мышления в процессе личностно-профессионального становления педагога, мнгр., Т. А. Дронова; под общей ред. проф.В.Г.Михайловского, Воронеж: ИПЦ «Научная книга», 2011, 386 с.

3 **Иванов И.В.**, **Кармин А.С.**, **Отюгов А.А.**, Практикум по психологии, СПб, 1996, с. 41-53.

սիրմամբ: Ռ. Քեթթելի բազմագործոն մեթոդիկան կիրառել ենք մտածողության ոճերն ուսումնասիրելիս՝ հետևյալ սկզբունքով. մի կողմից այդ գործոնների ազդեցությունը մտածողության ոճի վրա պարզելու նպատակով, մյուս կողմից՝ տեսական վերլուծության մեջ առանձին գործոնների փոխպայմանավորվածությամբ բացահայտվող մտածողության ոճերի մասին պատկերացում կազմելու համար:

Մտածողության ոճերի և անձնային գործոնների փոխադարձ կապը ենթակա է հատուկ ուսումնասիրման, քանի որ բոլոր գործոններն էլ այս կամ այն չափով հանդես են գալիս մարդու որոնողական և ստեղծագործական գործունեության մեջ՝ նկատի ունենալով, որ մտածողության ոճի դրսևորումն էլ ունի անձնային երանգավորում և ուղղակիորեն կապվում է բոլոր գործոնների հետ, չնայած դրանք անձի ուսումնասիրման մեջ ունենում են տարբեր գործառույթներ: Այսպես՝ B-ն, M-ը, Q_1-ը՝ ըստ Ռ. Քեթթելի, ուղղակիորեն ցույց են տալիս ինտելեկտուալ առանձնահատկություններ: Մեր գիտափորձերի պարագայում հուզակամային առանձնահատկությունները (C, G, I, O, Q_3, Q_4) և հաղորդակցական հատկություններն (A, H, F, E, Q_2, N, L) ավելի շատ դրսևորվել են խմբային ուսումնասիրություններում, թրեյնինգային պարապմունքներում, երբ մասնակիցներից մեկը համոզել է մյուսներին, թե ինչու՞ պետք է ընտրվի այս կամ այն տարբերակը՝ տվյալ իմացական խնդրի լուծումը կամ տվյալ հարցի պատասխանը գտնելու համար: Իմաստային առումով, մտածողության ոճը տեղեկույթի հավաքագրման, կուտակման, մշակման այս կամ այն իրավիճակին կամ պայմաններին ծառայեցնելու գործընթացների շարք է, որն առնչվում է մարդու ինքնավստահության հետ (այնքանով, որքանով մարդը պետք է լինի հանգիստ, ինֆորմացիայի որոնման հարցում իր տված գնահատականներին վստահ), անհատի կոնսերվատիզմի կամ ռադիկալիզմի հետ (նկատի ունենալով, որ մարդը հակված է նոր գաղափարներ ընդունելուն կամ առավելապես հիմնվելու ավանդական պատկերացումների վրա): Ուսումնասիրությունները կատարվել են Գորիսի պետական համալսարանի «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» և «Պատմություն» մասնագիտությունների 1-4-րդ կուրսերի ուսանողների շրջանում:

Ներկայացնենք «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 1-4-րդ կուրսերի ուսանողների հետ կատարված Ռ. Քեթթելի թեստի արդյունքները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

«Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ ուսանողների անձնային գործոնների ցուցանիշները՝ ըստ Ռ. Քեթթելի թեստի

Ֆակուլտետ	Կուրս	Փորձարկվող	MD	A	B	C	E	F	G	H	I	L	M	N	O	Q_1	Q_2	Q_3	Q_4
Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա	1	Միջինացված տվյալներ	6	5,75	4,5	7,25	7,5	5,25	9,25	9	6,5	3,5	7,25	7	8	7,5	5,5	7	6
	2	Միջինացված տվյալներ	6	8,5	3,25	3,75	5,75	5,5	7,75	8	9,25	5,5	7,75	5,25	8,75	7	5,5	8,25	8
	3	Միջինացված տվյալներ	7,5	7,25	3,75	4,25	4,25	7	8,75	7,25	5,5	5,5	6	5,75	8	5,25	4,25	8,25	7,75
	4	Միջինացված տվյալներ	11,75	9,5	5,25	7,5	5,5	7,5	8,5	8	7,75	5,25	7,5	7,75	7,5	9,25	4	9	5,25

Ստորև ներկայացնենք «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 1-4-րդ կուրսերի անձնային գործոնների արտահայտվածությունը՝ գծապատկերների տեսքով:



Գծապատկեր 1. «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ առաջին կուրսեցիների թեստավորման արդյունքները՝ ըստ Ռ. Քեթթելի թեստի



Գծապատկեր 2. «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողների թեստային արդյունքները



Գծապատկեր 3. «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողների թեստային արդյունքները



Գծապատկեր 4. «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ 4-րդ կուրսի ուսանողների թեստային արդյունքները

Ստորև ներկայացնենք «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 1-4-րդ կուրսեցիների թեստավորման արդյունքները՝ ցածր, միջին և բարձր արտահայտվածությամբ գործոններով.

Աղյուսակ 2

«Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4 կուրսերի արդյունքները.

Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա	Ցածր արտահայտվածությամբ գործոններ	Միջին արտահայտվածությամբ գործոններ	Բարձր արտահայտվածությամբ գործոններ
I կուրս	B, F, L, Q_2	MD, A,C, E, I, M, N, $Q_{1,}$ Q_3,Q_4	G, H, O
II կուրս	B, C	MD, E, F, L, N, $Q_{1,}$ Q_2	A, G, H, I, M, O, Q_3,Q_4
III կուրս	B, C, E, Q_1, Q_2	F, I, L, M, N,	MD, A, G, H, O, Q_3,Q_4
IV կուրս	B, E, L, $Q_{2,}$ Q_4	C, F, G, H, I, M, N, O, Q_3	MD, A, $Q_{1,}$

Ներկայացնենք «Պատմություն» մասնագիտությամբ 1-4-րդ կուրսերի ուսանողների անձնային գործոնների ցուցանիշները՝ ըստ Ռ. Քեթթելի թեստի (աղյուսակ 14):

Աղյուսակ 3

«Պատմություն» մասնագիտությամբ 1-4-րդ կուրսերի ուսանողների անձնային գործոնների ցուցանիշները՝ ըստ Ռ. Քեթթելի թեստի

Ֆակուլտետ	***Կուրս***	***Փորձարկվող***	***MD***	***A***	***B***	***C***	***E***	***F***	***G***	***H***	***I***	***L***	***M***	***N***	***O***	Q_1	Q_2	Q_3	Q_4
Պատմություն	1	**Միջ. արդ**	***8***	***7,25***	***3,75***	***6,75***	***4,5***	***6***	***7,5***	***7***	***7,25***	***4,25***	***6,5***	***7,75***	***8***	***7,25***	***5,25***	***6,25***	***6,75***
	2	**Միջ. արդ.**	***4,5***	***7***	***3,5***	***5,5***	***5,25***	***3,75***	***8***	***6,5***	***7,25***	***5***	***8***	***4,75***	***8,75***	***8***	***4,5***	***6***	***5,5***
	3	**Միջ. արդ.**	***6,5***	***8***	***5,75***	***6,5***	***4,5***	***6,25***	***7,75***	***8,5***	***6,25***	***5***	***8***	***7,5***	***6,75***	***7,25***	***3***	***7,5***	***7***
	4	**Միջ. արդ.**	***8,75***	***9,25***	***5,5***	***8,75***	***6***	***7,25***	***9,25***	***8,75***	***7***	***6***	***8***	***8,5***	***6,75***	***9,5***	***6,5***	***9***	***5,5***



Գծապատկեր 5. «Պատմություն» մասնագիտությամբ 1-ին կուրսեցիների թեստային արդյունքները



Գծապատկեր 6. «Պատմություն» մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողների
թեստավորման արդյունքները



Գծապատկեր 7. «Պատմություն» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողների թեստավորման արդյունքները



Գծապատկեր 8. «Պատմություն» մասնագիտությամբ 4-րդ կուրսեցիների թեստավորման արդյունքները

Աղյուսակ 4

«Պատմություն» մասնագիտության 4 կուրսերի արդյունքները՝ ցածր, միջին և բարձր արտահայտվածությամբ գործոններով

Պատմություն	Ցածր արտահայտվածությամբ գործոններ	Միջին արտահայտվածությամբ գործոններ	Բարձր արտահայտվածությամբ գործոններ
I կուրս	B, E, L	F, M, Q_2, Q_3	MD,A, C, G, H, I, N, O, Q_1, Q_4
II կուրս	MD, B, F, L, N, Q_2,	A, C, E, H, Q_3, Q_4	G, I, M, O, Q_1
III կուրս	E, Q_2	MD, B,C,F, I, L,	A, G, H, M, N, O, Q_1 Q_3 Q_4
IV կուրս	B, E, L, O, Q_2, Q_4	F, I, M	MD, A, C, G, H, N, Q_1, Q_3

Թեստի արդյունքները մշակել ենք ըստ ուսանողի ընտրած մասնագիտության և այնուհետև այն համեմատել մտածողության ոճերի միջին ցուցանիշների հետ՝ պարզելու, թե մտածողության ոճի դրսևորումներն ինչպե՞ս են կապված գործոնային խմբերի հետ[1,2]:

Ռ. Քեթթելի 16 անձնային գործոնները համեմատել ենք 3 գործոնային խմբերով՝

ա) ինտելեկտուալ առանձնահատկություններ (B, M, Q_1),

բ) հուզակամային առանձնահատկություններ (C, G, I, O, Q_3,Q_4),

գ) միջանձնային փոխազդեցությունների հաղորդակցական հատկություններ և առանձնահատկություններ (A, H, F, E, Q_2, N, L):

Արդյունքների հաշվարկումը ցույց է տալիս, որ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողների մտածողության համեմատաբար բարձր ոճին (24,37) համապատասխանում է ինտելեկտուալ առանձնահատկությունների (B, M, Q_1) փոքր-ինչ ցածր ցուցանիշ (6,18), իսկ «Պատմություն» մասնագիտության ուսանողների մտածողության ցածր ոճին (20) համապատասխանում է համեմատաբար բարձր ցուցանիշ (6,74): Հուզակամային առանձնահատկությունների (C, G, I, O, Q_3,Q_4) հետ կատարված

1 **Կարապետյան Վ., Հախվերդյան Ն.** Մտածողության ոճերի փորձարարական հետազոտության մի քանի արդյունքներ «Կրթությունը և գիտությունը Արցախում», գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, թիվ 3-4, 2009թ., էջ 71-76:

2 **Կարապետյան Վ., Հախվերդյան Ն.** Մտածողության ոճերի փորձարարական հետազոտության մի քանի արդյունքներ «Կրթությունը և գիտությունը Արցախում», գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, թիվ 1-2, 2010թ., էջ 8-12:

հաշվարկներից երևում է, որ մտածողության բարձր ոճ (24,37) ունեցող «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողներին համապատասխանում է հուզականային բարձր ցուցանիշ (7,4), իսկ «Պատմություն» բաժնի մտածողության ցածր ոճ (20) ունեցող ուսանողներին համապատասխանում է համեմատաբար ցածր ցուցանիշ (7,14): Միջանձնային փոխազդեցությունների հաղորդակցական հատկությունները և առանձնահատկությունները (A, H, F, E, Q_2, N, L) մտածողության բարձր ոճ (24,37) ունեցող «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողների մոտ փոքր-ինչ բարձր են (6,29), քան «Պատմություն» բաժնի ուսանողների մոտ, որտեղ մտածողության ցածր ոճին (20) համապատասխանում է փոքր-ինչ ցածր ցուցանիշ (6,2):

Համեմատել ենք նաև «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» և «Պատմություն» մասնագիտությունների ուսանողների «Ինքնագնահատական (MD)» անձնային գործոնի միջինացված տվյալները, որից, ըստ աղյուսակի պարզվել է, որ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողների մտածողության համեմատաբար բարձր ոճին (24,37) համապատասխանել ինքնագնահատականի բարձր արդյունք (7,81), իսկ «Պատմություն» մասնագիտության ուսանողների մտածողության համեմատաբար ցածր ոճին (20) համապատասխանել է ինքնագնահատականի ավելի ցածր արդյունք (6,93): Մտածողության ոճերի դրսևորումներն ուղղակիորեն կախված են ձեռք բերած գիտելիքների կիրառման եղանակից, որն ունի նաև անձնային գործոնների երանգավորում: Մտածողության ոճերը և Ռ. Քեթթելի անձնային որոշ գործոնների կապերը ցույց են տալիս, որ բոլոր անձնային գծերը չեն, որ որոշակիորեն ազդում են մտածողության ոճերի վրա: Բացի դրանից, նկատվում է մտածողության ոճերի և անձնային գործոնների միջև ինչպես պրոգրեսիվ, այնպես էլ՝ ռեգրեսիվ կապեր: Անձնային գործոններից կապ գոյություն ունի ինքնագնահատականի, շփվողականության-պարփակվածության միջև, իսկ մյուս գործոնների և մտածողության ոճի միջև կապը թույլ է, որը հիմք է տալիս կազմել հատուկ ուսուցողական ծրագրեր՝ այդ գործոնների ազդեցությունը բարձրացնելու և զարգացնելու համար:

Վերը նշված վերլուծությունները ցույց են տալիս իմացական խնդիրների միջոցով բացահայտված մտածողության ոճերի և Ռ. Քեթթելի անձնային գործոնային խմբերի միջև եղած հնարավոր կապերը:

СУЩНОСТЬ ДИФФЕРЕНЦИАЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ ЛИЧНОСТИ В ЭКСПОЗИЦИИ В КОНТЕКСТЕ СТИЛЕЙ МЫШЛЕНИЯ - НАЗЕЛИ АХВЕРДЯН - В статье исследуются факторы стилей мышления личности в контексте, для изучения которого применялся многодейственный личностный тест Кеттела. В частности, делается попытка выяснить, как реальность целостности человека влияет на стереотип его мышления, особенно в системе профессионального образования . Рассматривается вопрос о том, какой из многочисленных личностных факторов доминирует в том, чтобы **сделать** стиль мышления более заметным. Также выделяются и изучаются возможные связи между интеллектуальным фактором и стилями мышления.

Ключевые слова: стиль мышления, черты личности, интеллектуальные особенности, эмоциональные особенности, коммуникативные навыки, познавательный процесс, интеллектуальные способности.

THE ESSENCE OF THE PERSONALITY MULTI-FACTOR STUDY IN THE CONTEXT OF REVEALING THINKING STYLES - NAZELI HAKHVERDYAN - The article discusses personality factors in the context of the style of thinking, for which has been used the Kettle multi-personality test. More specifically, an attempt is made to find out how the reality of a person´s integrity influences the stereotype of thinking, particularly in the vocational education system. The question is, which of the many personality factors dominates to make the thinking style more visible, for example, to determine the impact of personal emotions or flexibility of mind in terms of acquiring knowledge. The possible connections between intellectual factor and thinking styles are also highlighted and studied.

Key words*:* thinking style, personality factor, intellectual peculiarities, emotional features, communication skills, cognitive process, intellectual abilities.